ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան 08 հուլիսի, 2021 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 19 Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հուլիսի 7-ի N 1066-Ա/2 հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի մրցույթը:

2. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Շ. Աղաբեկյան)՝ եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը և մրցույթի հրավերի փաթեթի տեղադրումը ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում:

3. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչությանը (պետ Կ. Ղարիբյան)՝

1) մրցույթի հայտ ներկայացնող գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար կազմակերպել տեղեկատվական խորհրդատվության տրամադրումը,

2) ապահովել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

3) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ գիտական թեմաների ղեկավարներին սահմանված կարգով իրազեկումը,

4) կազմակերպել գիտական թեմաների ղեկավարների հետ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

4. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ սահմանված կարգով ապահովել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Հովսեփյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ